ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ՀՀ ՄՆ ՄԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-16/29-6» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «23» «10» 2019 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Ն. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Կոտայքնախագիծ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Վարդանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով 2016թ մայիսի 6-ին կնքված պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման N «ՀՀ ՄՆ ՄԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-16/29-6» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.4-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1515-N որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը թույլտվություն տալու մասին» N 1082-Ն որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետը և Պայմանագրի 5.1.1 կետը՝ Կողմերը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունը.

1.1.1 Սահմանել, որ սույն համաձայնագրով նախատեսված աշխատանքների ընդհանուր գինը կազմում է 7 655 500 (յոթ միլիոն վեց հարյուր հիսունհինգ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

1.1.2 Հաստատել աշխատանքների կատարման ծավալաթերթ-նախահաշիվը համաձայն սույն համաձայնագրի թիվ 1 հավելվածի:

1.1.3 Սույն համաձայնագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը սահմանել համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 60-րդ օրացույցային օրը:

1.1.4 Հաստատել սույն համաձայնագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները համաձայն թիվ 2 հավելված օրացուցային գրաֆիկի:

1.1.5 Հաստատել սույն համաձայնագրով նախատեսված աշխատանքների կատարման դիմաց վճարման ժամանակացույցը համաձայն թիվ 3 հավելվածի:

1.1.6 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են համաձայնագրի թիվ 4 հավելվածում:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված Պայմանագրով ստանձնաց Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, աշխատանքների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի թիվ 1, թիվ 2, թիվ 3 և թիվ 4 հավելվածները համարվում են համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ և ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Կոտայքնախագիծ» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2,	Հասցեն՝ ՀՀ կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության 2.
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	հեռ.՝ (0222) 2-54-44, 096-78-80-08
	էլ. փոստ՝ kotaykproekt@rambler.ru
	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, «Աբովյան» մասնաճուղ
Հ/Հ 900011029080	Հ/Հ 163088121476
ՀՎՀՀ 02698732	ՀՎՀՀ 03503627
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
Ն. Հարությունյան	Ա. Վարդանյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

«23» «10» 2019 թ.

Հավելված թիվ 1
կնքված
N 1 համաձայնագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՄԱՐԻՍ ԳՅՈՒՂԻ ՍԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Հազար դրամ

N	Աշխատանքների տեսակները և անվանումը	Չ/Մ	Քանակ	Միավ. գինը	Գումարը
1	2	3	4	5	6
	Վերականգնողական աշխատանքներ				
	Դրսի պատեր				
7	Մետաղական խողովակից ներքին տախտակամածի կապում քանդում	մ²	150.0	1.684	252.664
8	Հարթ պատերի կարանների մաքրում, լվացում և կարանախցում	մ	194.40	0.7128	138.571
11	Պարզ պրոֆիլով ուղղաձիք քիվի քանդում, համարակալումով տուֆ քարից	մ²	7.10	19.739	140.149
13	Նույնի նոր տաղ ու շար տուֆից	մ²	7.3	111	808.274
	Ինտերեր				
17	Թաղերի քայքայված շաղախի քանդում հեռացում 50% և լվացում ջրի շիթով ճնշման տակ	մ²	64.85	3.070	199.058
21	Խորանի միակոր մասի քայքայված շաղախի քանդում հեռացում 50% և լվացում ջրի շիթով ճնշման տակ	մ²	12.60	3.070	38.676
23	Հարթ պատերի նոր տաղ ու շար կապտատաշ տուֆ քարով	մ²	0.7	52.932	37.052
24	Հարթ կոպտատած պատի քայքայված շաղախի քանդում հեռացում 50% և լվացում ջրի շիթով ճնշման տակ	մ²	98.35	3.070	301.886
25	Նույնի պատի սվաղ ցեմեռտ-ավազե շաղախով	մ²	196.70	2.953	580.770
29	Պատուհանների թեք մասի լիցքի քանդում հեռացում	մ³	4.00	13.223	52.890
30	Նույնի լվացում ջրի շիթով ճնշման տակ	մ²	82.19	0.944	77.626
31	Պատուհանների թեք մասի լիցքի կատարում ցեմենտ-ավազե շաղախով	մ³	3.0	59.142	177.425
32	Պատուհանների թեք մասի սվաղ ցեմենտ-ավազե շաղախով	մ²	82.19	4.806	394.991

33	Դռան թեք մասի քայքայված շաղախի քանդում հեռացում 30% և լվացում ջրի շիթով ընշման տակ	մ²	4.56	3.070	13.997
41	Պատերում և մույթերում անցքերի և դատարկությունների փոշեզրկում և լվացում հատուկ բաղադրակազմի շաղախի ներարկում ճնշման տակ	լ	814.04	1.933	1,573.811
48	Մույթերի, որմնամույթերի քիվերի մաքրում քայքայված շաղախից 30% և լվացում ջրի շիթով ճնշման տակ	մ²	43.20	3.070	132.602
49	Կամարների ,մաքրում քայքայված սվաղից 30% և լվացում ջրի շիթով ճնշման տակ	մ²	20.70	3.070	63.540
64	Հարթ ծածկաշարի վերաշար տուֆից եզրերի մշակումով	մ²	13.00	28.306	367.980
68	Հին կրաշաղախի լիցքի քանդում հեռացում	մ³	14.60	13.223	193.049
69	Լիցքի կատարում բարդ կրաշաղախով և խամքարով	մ³	15.01	47.519	713.264
	Տարածքի բարեկարգում				
86	Բետոնից ջրահեռացման առվակի պատրաստում	մ³	2.00	53.327	106.654
87	Նույնի տակ խճից նախապատրաստակ շերտ 5սմ հաստությամբ	մ³	0.75	19.535	14.651
	Ընդամենը				**6,379.580**
	ԱԱՀ 20%				**1,275.920**
	Ընդամենը				**7,655.500**

* Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ Կոտայքի մարզի Կամարիս գյուղի Սբ Հովհաննես եկեղեցու տարածքում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

_____ **Ն. Հարությունյան**

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

_____ **Ա. Վարդանյան**

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված թիվ 2
«23» «10» 2019 թ. կնքված
N 1 համաձայնագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՄԱՐԻՍ ԳՅՈՒՂԻ ՍԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	Վերականգնողական աշխատանքներ	Համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո՝ 60-րդ օրացուցային օրը ներառյալ
ԸՆԴԱՄԵՆԸ		**Համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից**	**Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո՝ 60-րդ օրացուցային օրը ներառյալ**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ **ԿԱՊԱԼԱՌՈՒ**

_____ **Ն. Հարությունյան** _____ **Ա. Վարդանյան**
(ստորագրություն) (ստորագրություն)

Կ.Տ Կ.Տ

«23» «10» Հավելված թիվ 3
2019 թ. կնքված
N 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի						
հրավերով նախա-տեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել ՀՀ 2019թ պետական բյուջեից՝ ըստ ամիսների, այդ թվում*			
			հոկտեմբեր	նոյեմբեր	Դեկտեմբեր, մինչև 30-ը	**Ընդամենը**
1	45451600-12	Վերականգնողական աշխատանքներ (ՀՀ Կոտայքի մարզի Կամարիս գյուղի Սբ Հովհաննես եկեղեցու նորոգման և տարածքի բարեկարգման)	2 000 000	2 000 000	7 655 500	**7 655 500**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

(ստորագրություն) **Ն. Հարությունյան**

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

(ստորագրություն) **Ա. Վարդանյան**

Կ.Տ

Հավելված թիվ 4
«23» «10» 2019 թ. կնքված
N 1 համաձայնագրի

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՄԱՐԻՍ ԳՅՈՒՂԻ ՍԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻՆ ԵՎ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

ՀՀ Կոտայքի մարզի Կամարիս գյուղի Սբ.Հովհաննես եկեղեցու նորոգման և տարածքի բարեկարգման աշխատանքների կատարման ընթացքում շինարարական նյութերը ու կոնստրուկցիաները պետք է ունենան երեք տարվա երաշխիքային ժամկետ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
_____ Ն. Հարությունյան	_____ Ա. Վարդանյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ